ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ապրիլի 22 - ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Դալար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային լսում: Օրակարգում՝ «Սավ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից Արտաշատ համայնքի Դալար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի <Հարավ-արևելյան> տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կատարվելիք աշխատանքների վերաբերյալ 1 - ին հանրային քննարկումը: Մասնակցում էին Արտաշատ համայնքի ղեկավարի 19.03.2025թ-ի թիվ 98 կարգադրությամբ հանրային լսման պատասխանատու և վարող նշանակված, Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Խ.Պողոսյանը, Դալար բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Հովհաննիսյանը, Դալար բնակավայրի բնակիչներ, ինչպես նաև Ընկերության ներկայացուցիչները:

Հանրային լսման ընթացում, որը տեսաձայնագրվում էր, մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Արտաշատ համայնքի ներկայացուցիչ՝ Խաչիկ Պողոսյանը, ապա խոսքը տրամադրվեց «Սավ Մայնինգ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանին:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը նշեց, որ ունենալով ընդերքօգտագործման իրավունք ընկերությունը Դալար բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի <Հարավարևելյան> տեղամասում իրականացրել է երկրաբանահետախուզական աշխատանքներ, ինչի արդյուքում հաստատվել են օգտակար հանածոյի պաշարները և անհրաժեշտություն է առաջացել կատարել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Նա հանգամանալից ներկայացրեց լսումների ու դրա հետագա ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի ընթացակարգը, առաջնային ուշադրություն դարձնելով շահագործման ընթացքում առաջացող բնապահպանական խնդիրներին և նախատեսվող բնապահպանական միջոցառումներին, սանիտարական գոտու

հեռավորությանը, նշեց, որ նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, ասֆալտապատ ճանապարհից առկա է մուտքի ճանապարհ, նա անդրադարձ կատարեց այդ ճանապարհների շահագործման արդյունքում առաջացած փոշու նվազեցմանը ուղղված միջոցառումներին և սոցիալական ծրագրերի մասնակցությանը: Շեշտվեց, որ հանքավայրի տեղամասը գտնվում է առավելապես հեռու բնակելի հատվածից և օրենսդրությամբ սահմանված սանիտարական գոտու հեռավորությունը պահպանված է: Տեղամասը ընդգրկելու է մոտ 4,0 հա տարածք, որի նպատակային նշանակությունը դառնալու է արդյունաբերական, ինչի արդյուքում հողի վարձակալության վճարներից համայնքի բյուջե մուտքագրվելու են ավելի շատ գումարներ:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց նաև համայնքի ազդակիր ներկայացուցիչների, ՀՀ Արտաշատ համայնքի ներկայացուցիչ Խաչիկ Պողոսյանի կողմից բարձրացված մի շարք հարցերին: Հարցերը հիմանականում վերաբերվում են առկա ճանապարհների օգտագործմանը, հանքավայրի պաշարներին և տեղադիրքին, շահագործվող տեխնիկաների գերբեռնվածությանը և մաքրությանը, նոր ստեղծվող աշխատատեղերին, ինչպես նաև սոցիալական ծրագրերի ուղղվածությանը: Ճանապարհների օգտագործման հետ կապված մեքենաների գերբեռնվածության վերահսկողության վերաբերյալ համայնքի ներկայացուցիչ Խ Պողոսյանը առաջարկեց ճանապարհին տեղադրել կշեռք, ինչի վերաբերյալ ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը հայտնեց, որ հարցը ենթակա է քննարկման, քանի որ դրա նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է լիազոր մարմինը, մեքենաների բեռնվածության նորմերի խախտման համար նախատեսված են ահռելի տույժ ու տուգանքներ: Աշխատատեղերի մասով Գ. Հակոբյանը նշեց, որ ընկերությունը նախատեսում է կառուցել նաև լվացման կայան որտեղ ներգրավվելու են Դալար բնակավայրի բնակիչները, իսկ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների համալիր գործունեության արդյուքում ստեղծվելու են մոտ 20 – 25 նոր աշխատատեղ որտեղ ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները: Ընկերության ներկայացուցիչ Ա. Ավագյանը նշեց, որ հանքավայրը իր ծավալներով

փոքր է և հետևաբար բոլոր բնապահպանական խնդիրները կառավարելի են: Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը հայտնեց, որ ընկերությունը պատրաստակամ է մասնակցելու համայնքի սոցիալական ծրագրերին, ինչպես նաև պատասխանեց հնչեցած այլ հարցերին՝ հաստատեց որ իր կողմից պարզաբանված այդ բոլոր հարցերի պատասխանները և լուծումները ներառված կլինեն լիազոր մարմնին ներկայացվող փաթեթում և դրական արդյունքի դեպքում ընկերության կողմից միանշանակ կիրականացվեն:

Եղավ մտքերի փոխանակություն:

«Սավ Մայնինգ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը հայտնեց, որ նախատեսվում է ստեղծել լրացուցիչ շուրջ 20-25 նոր աշխատատեղ միջինը 150000 դրամ ամսեկան աշխատավարձով և աշխատողների զգալի մասը կներգրավվեն Դալար բնակավայրի բնակիչներից :

Հանրային քննարկումների արդյունքում ՀՀ Արտաշատ համայնքի ներկայացուցիչ՝ Խաչիկ Պողոսյանը և լսումների մասնակիցները հայտնեցին համայնքի դրական դիրքորոշումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

«ՍԱՎ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ Խ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ